ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1963 Общественные науки

Ա. Բ. Կարինյան

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳԻՐ

1.

Առաջին անգամ չէ, որ ընկ. Ն. Ս. Խրուշչովի կողմից հստակ և կտրուկ կերպով ընդգծվում են սովետական մշակույթի առաջնահերթ նպատակները։ Գաղտնիք չէ այն, որ անգամ անմիջապես մշակույթի պրոբլեմներ չշոշափող նրա միշտ ուշադրավ ելույթների մեջ ժամանակին առաջադրվել են կարևորագույն սկզբունքային նշանակություն ունեցող պրոբլեմներ, որոնք չեն կարող անուշադրության մատնվել արվեստի, գրականության, գիտության բնավայրում աշխատողների կողմից։ Ավելին. մի շարք այն խորհրդաժողովները, որոնք գումարվել են մեր պարտիայի առանձնապես XXI և XXII համագումարներից հետո, ինչպես հայտնի է բացահայտել և առաջադրել են ամենակտրուկ կերպով ոչ միայն մարքսիզմ-լենինիզմի տեսական դրույթների ճշգրիտ կիրառման կարևորությունը, այլ նաև այդ դրույթները աղարտող դոգմատիկորեն ու սեկտանտներին հատուկ ձևով մեկնաբանող առանձին տենդենցների վճռական դատափետման անհրաժեշտությունը։ Արդեն այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում պարբերաբար նշվել է առանձնապես որոշակի կերպով լենինյան դրույթների և սկզբունքների ճշգրիտ մեկնաբանության և կիրառման մեծագույն կարևորությունը ցույց է տալիս, որ չնայած սովետական համայն մշակույթի մեծ վերելքին, ակներև հաղթանակների կողքին նշմարվել են ու նշմարվում ես թերություններ, որոնց վճռական հաղթահարման համար պարտիայի ղեկավար շտաբը նորից և նորից հիշեցնում է քննադատության և ինքնաքննադատության ծավալման կարևորության մասին։

Այդ ամենը ակամայից մենք վերհիշում ենք, երբ ուսումնասիրում ենք սովետական գրականության և արվեստի գործիչների հետ պարտիայի և կառավարության ղեկավարների հանդիպման ժամանակ, 1963 թվականի մարտի 8-ին, ընկ. Ն. Ս. Խրուշչովի արտասանած նշանակալից ճառի բովանդակությունն ու հիմնական դրույթները։ Բավական է միայն մոտենալ այդ դրույթների անգամ ընդհանուր քննարկմանը, որպեսզի ակներև դառնա այն, որ ընկ. Ն. Ս. Խրուշչովի ճառի մեջ առաջադրվում են թեորիական կարևորագույն նշանակություն ունեցող պրոբլեմներ, որոնք պետք է դրավեն բոլոր հումանիտար գիտությունների ներկայացուցիչների ուշադրությունը։ Այն, ինչ որ ասվում է այդ ճառում գրականության և արվեստի հարցերի մասին, ուրույն ղեկավարություններ է տալիս նաև արվեստագետներին, գրականագետներին, պատմաբաններին։

Ն. Ս. Խրուշչովը հենց սկզբից շեշտելով աշխատանքի նշանակությունը և կոմունիզմ կառուցող միլիոնների միաձույլ և միասնական աշխատանքի կարևորությունը, միաժամանակ առաջարկում է նկատի առնել «մարդկանց մի

որոշակի մասի գիտակցության մեջ եղած անցյալի մնացուկների» հաղթահարման ուղղությամբ կազմակերպված աշխատանքի անհրաժեշտությունը։ Հիշեցնելով, որ գրականությունն ու արվեստը կոմունիստական դաստիարակությանն օժանդակող «զորեղ միջոց են», Ն. Ս. Խրուշչովը միաժամանակ շեշտում է նաև «գաղափարական գենի բոլոր տեսակների» նշանակությունը։ Ահա ինչու կոչ անելով երբեք չսահմանափակվել հաջողությունների արձանագրությամբ և հրահանգելով միշտ նշել նաև «լուրջ թերությունները», Ն. Ս. Խրուշչովն, իհարկե, միանման խորհուրդ է ուղղում հասարակական գիտությունների բոլոր ներկայացուցիչներին։

Շատ ուշագրավ պետք է համարել այն, որ զեկույց-ճառի մեջ ընդգծված է սոցիալիստական ռեալիզմի գրականության և արվեստի վերելքի նշանակությունը, բարձր գեղարվեստական ստեղծագործությունների դերը, ժողովրդի կողմից բարձր գնահատված հոգևոր արժեքների դերը։ Չի կարելի երբեք անուշադրության մատնել այն, որ Ն. Ս. Խրուշչովը ծանրանալով առանձնապես ռևոլյուցիոն տրադիցիաների վրա, մատնանշում է ակնառավոր ռևոլյուցիոն բանաստեղծ Դեմյան Բեդնու պոեզիայի վրա։ Կտրուկ իր դիտողությամբ արդեն նա շեշտակի հարված է ուղղում ընդդեմ կյանքից կտրված անաղարտ էսթետների։ Քողարկել այդ դիտողության իրական իմաստը անցնել հստակ ռևոլյուցիոն մեկնաբանության կողքից, իհարկե, չի կարելի։ «Դեմյան Բեդնու երգերով,— կարդում ենք մենք,—մարտի էին դնում... Այդ երգերը մատչելի էին բոլորի համար, հասկանալի յուրաքանչյուրին, նույնիսկ կարմիր բանակի շարքերում գտնվող անգրագետ գյուղացիներին...»։ Ապա հիշատակելով ռևոլյուցիոն բանաստեղծի «Ինչպես էր հարազատ մայրս ինձ նանապարհում» երգի մեջ հնչող ժողովրդի խոհերի ու մտորումների ինտոնացիան, Ն. Ս. Խրուշչովը ասում է, որ բանաստեղծը նվիրել է «իր ամբողջ հսկայական տաղանդը աշխատավորներին շահագործողների լծից ազատագրելու մեծ գործին...»։ Ինքնին արդեն պարզ է, որ այդպիսի մոտեցումը չի կարող անուշադրության մատնվել նրանց կողմից, որոնք հնարավոր են համարում կոմունիստական շինարարության վեհապանծ օրերին կտրվել ժողովրդից և սահմանափակվել սոսկ «կոշտ իրականության» հանդեպ շարահյուսվող անաղարտ, մտացածին կամ քաղցրավուն երգերի հորինումով։ Ն. Ս. Խրուշչովն, իհարկե, դիտավորությամբ է հիշատակում մեծ ռևոլյուցիոն էպոպեայի վաղեմի ապրումները, ռևոլյուցիոն երգերի թարմությունը, ռևոլյուցիոն ինտոնացիան։ կապը ռևոլյուցիոն նոր մտորումներով համակված մարտական ժողովրդական գնդերի հետ։ Չի կարելի մեր կարծիքով անցնել նաև մեր օրերի մեծատաղանդ քանդակագործ Վուչետիչի բարձր ստեղծագործությանը նվիրված, կամ Ռոզա Լյուքսեմբուրգի, Կարլ Լիբկնեխտի, ռևոլյուցիոն մարտիկների նվիրական հիշատակին նվիրված իմաստալից տողերի կողքից։ Բևոլինում կառուցված սովետական ռազմիկների հուշարձանի դաղափարական մեծ նշանակությունը ընդգծելով, Ն. Ս. Խրուշչովն, իհարկե, կոչ է անում արվեստի վարպետներին կերտել ռեալիստական նոր գործեր, ստեղծել ժողովրդական մարտական հույզերով համակող գեղարվեստական մոնումենտներ և միշտ նկատի առնել, որ միայն բարձր դաղափարայնություն ունեցող գեղարվեստական ստեղծագործությունները կարող են այրել ժողովրդի սիրտն ու հոգին, համակել նրան առույգ ու մարտական տրամադրությամբ, դարձնել դեպի կոմունիզմի լուսավետ կարգերը նետվող ամրակուռ հավաքույթ։

Շեշտված դիտողություններից հետո, բացահայտելով իշխող դասակարգերի այլանդակ արվեստի իրական պատկերը և վճռական կերպով դատափետելով անհասկանալի սխեմաների ու մռայլ նկարներ «ստեղծագործողների» իսկական էությունը, Ն. Ս. Խրուշչովը դատապարտում է ոչ միայն նկարիչներին, այլ նաև դրանց այլանդակ արվեստի մասին շաղակրատող կեղծ արվեստագետներին...։ Խոսքն այն «արվեստագետների» մասին է, որոնք փոխարեն արստրակցիոնիստների այլանդակությունները մերկացնելու սահմանափակվում են կվազի-իմաստասիրական դիտողություններով և առանձին դեպքերում այնպիսի արտառոց դատողություններով, որոնք նպաստում են այլանդակ նկարների նույնիսկ ուրույն պաշտպանությանը։

Արվեստի պատմաբանների ուշադրությունը կարող են գրավել նաև Ն. Ս. Խրուշչովի անչափ նշանակալից դիտողությունները կինոյի, արվեստի գործիչների մասին։ Նորից ընդգծելով կինոնկարների գաղափարական ուղղության և գեղարվեստական վարպետության կարևորությունը. Ն. Ս. Խրուշչովը վճռականորեն դատափետում է տաղտուկ նկարները և «ձանձրույթ» պատճառող անորակ ստեղծագործությունները։ Նշանակալից և ուսանելի պետք է համարել առանձնապես այն, որ նույնիսկ առանձին կինոնկարների առանձին հաջող տեղերը բավական չեն դատվում միօրինակ նկարների անհանդուրժելի և խորթ գաղափարների կոծկման ու սքողման համար։ Հաջող տեղերն, իհարկե, կարող են քողարկել նկարի իսկական իմաստը և նույնիսկ նպաստել անհանդուրժելի և հակահասարակական գաղափարների տարածմանը։ «Իլյիչի ուղեկալը» կինոնկարի առթիվ, օրինակ, Ն. Ս. Խրուշչովի ճառում որոշակիորեն շեշտված է, որ չի կարելի տարվել նույնիսկ առանձին «հուզիչ» տեղերով և մոռանալ այն, որ նման «տեղերը» իրականում «քողարկում են նկարի իսկական իմաստը» և առաջադրում են «սովետական մարդկանց համար անընդունելի խորթ գաղափարների և հասարակական ու անձնական կյանքի նորմաների հաստատումը»։ Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ հիշված կտրուկ դիտողությունն անհրաժեշտ է հաշվի առնել միշտ այն պարագաներում, երբ անհրաժեշտ չափով նկատի չի առնվում յուրաքանչյուր աշխատանքի հիմնական գաղափարի ճշգրիտ մեկնաբանության կարևորությունը։ Երբեք չի կարելի քողարկել աշխատանքի «իսկական իմաստը»։ Ավելի քան ակնորոշ է, որ հստակ այդ դրույթը պետք է ուսանելի լինի ոչ միայն գրականության և արվեստի ստեղծագործությունների գնահատության ժամանակ։ Քիչ հետո Ն. Ս. Խրուշչովը հիշատակելով կինոնկարի «առավել դրական» երեք տղաներին, ակներև զայրույթով ասում է, որ ժողովուրդը չի կարող «այդպիսի երիտասարդների հետ կապել ապագայի իր հույսերը»։ Նա վճռականորեն նշում է, որ նկարը բեմադրողները մի «թույլ ապտակ են տվել սրիկային», բայց մոռացել են «ցույց տալ, թե ինչպես մեր երիտասարդության մեջ ապրում են և զարգանում երիտասարդ գվարդիականների հիանալի տրադիցիաները։ Խոսքը մեր երիտասարդության առաջավոր շարքերի մասին է՝ կորչագինների և կոշևոյների ու տյուլենինների հերոսական ուղիներով քայլող տոկուն երիտասարդ կառուցողների մասին, սոցիալիստական գործարաններում ու դաշտերում մեծ աշխատանք տանող այն գործիչների մասին, որոնք աշխատում են ծերերի, իրենց հայրերի, ավագ եղբայրների, հասակավոր խորհրդատուների հետ միասին՝ կոմունիզմի մեծ շենը կառուցող սովետական համերաշխ հայրենիքում։ Դատափետելով կինոնկարի սխալ դիրքավորումը, Ն. Ս. Խրուշչովը որոշակի կերպով ընդգծում

է. «Նկարը բեմադրողները այն (հակասությունները) հորինել են և արհեստականորեն ուռճացնում են ոչ լավ դիտավորություններով»:

Նորից նշելով, որ սոցիալիստական հասարակության մեջ «գոյություն չունի հայրերի և զավակների պրոբլեմը՝ հին իմաստով», Ն. Ս. Խրուշչովը կոչ է անում վճռականորեն հաղթահարել անհանդուրժելի սխալները, դատափետել ոչ միայն մակերեսային մոտեցումը կյանքին և իրականությանը, այլ նաև տակավին չքննարկված ու չցուցահանված նկարի «միջազգային մասշտաբով լայն ռեկլամային կամպանիայի» ծավալումը։ Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ կտրուկ ու դիպուկ այդ դիտողությունը պարտավոր են հաշվի առնել ակներև սխալները քողարկող և քննադատությունը ճնշող գործիչները։ Ինքնին արդեն պարզ է, որ խոսքը նրանց մասին է, ովքեր հիրավի անուշադրության են մատնում բազմերանգ սովետական իրականության ճշգրիտ վերարտադրության անհրաժեշտությունը և սխալ ուղղություն են հաղորդում երիտասարդության գաստիարակությանը։

2.

Մի հիմնական ելակետ պարտադիր պիտի լինի սովետական մշակույթի բոլոր աշխատավորների համար։ Դա սովետական ժողովրդի ուժերի ու եռանդի ամրացման ուղղությամբ տարվող աշխատանքի կարևորությունն է։ Կյանքի բացասական կողմերն էլ ցուցադրել ու քննադատել են առաջավոր սովետական գրողները։ Սակայն նրանք տխուր ու բացասական երևույթներին մոտեցել են սովետական ժողովրդի բարեկամների դիրքերից, բացահայտել են իրենց դիրքորոշումը մթին երևույթների իսկական հեղինակների նկատմամբ և միշտ հաշվի են առել, որ բացասական կողմերի նկարագծումը պետք է օգնի «ժողովրդին նոր հասարակարգի համար նրա պայքարում», և օժանդակի նրա ուժերի ամրապնդման ու շարքերի համախմբմանը։ Այդ է նկատի ունի Ն. Ս. Խրուշչովը, երբ հիշատակելով տաղանդավոր գրող Միխալկովի առակները, նշում է ամենից առաջ վարպետության նշանակությունը։ Դատափետելով մասնավորապես «առանձին հեղինակների գործերում արտահայտվող որոշ սխալ մոտիվների ու տենդենցների» առկայությունը, Ն. Ս. Խրուշչովը այնքան պարզ է գրում, որ չի կարող որևէ տարակուսանքներ ստեղծել։ Նա որոշակի կերպով ասում է, որ սխալների կամ մթին երևույթների քննադատությունը չպիտի լինի մտացածին, տենդենցիոզ, միակողմանի։ Երբ «ամբողջ ուշադրությունը միակողմանիորեն կենտրոնացվում է ապօրինության, կամայականության, իշխանությունը չարաշահելու փաստերի վրա», նկարագծված պատկերն էլ դառնում է անճիշտ, սխալ, տենդենցիոզ։ Այդ պատճառով նման պատկերները օգտագործվում են թշնամիների կողմից և քողարկում են իրականում մեր իրականության ակներև լուսավոր կողմերի առկայությունն ու նշանակությունը։

Միանգամայն անհրաժեշտ ու տեղին են ճառում, անհատի պաշտամունքի տարիների ծանր հետևանքների մասին նետված դիտողությունները։ Գաղտնիք չէ այն, որ այդ մասին մեր պարտիան ասել է ժողովրդին ամբողջ ճշմարտությունը: Հիմնովին սխալ է սովետական իշխանության թշնամիների խորամանկ և պրովոկացիոն շաղակրատությունը։ Սովետական մեծ ժողովուրդը՝ պատերազմի ամենադժվարին տարիներին Լենինի դրոշի ներքո համախմբված հերոսական պայքար է մղել ռազմական տեխնիկայով զինված վայրագ ֆաշիստ-

ների դեմ, դեն է նետել ու ջախջախել ֆաշիստական բանակները, տարել է մեծ ու աննախընթաց հաղթանակ։ Պատերազմից հետո սկսվել է բուռն շինարարության պատմական նոր շրջան։

Հարուստ փաստերն ու թվական տվյալներն այսօր հայտնի են անգամ արտասահմանյան երկրներում ապրող աշխատավորների լայն զանգվածներին։ Կառուցվել են նոր քաղաքներ և ինդուստրիական վայրեր, կազմավորվել են լենտուղիաստ կառուցողների ամուր շարքեր, ստեղծվել են գիտական հաստատություններ։ Այդ ամենը նպաստել է մեր մեծ սոցիալիստական հայրենիքի ամրացմանը։

Ահա ինչու Ն. Ս. Խրուշչովը հիշեցնում է և որոշակիորեն ընդգծում. «Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, մեծ Լենինի գաղափարների ու պատգամների դրոշով մեր ժողովուրդը կառուցում էր ու կառուցեց սոցիալիզմը»։ Չնայած անառարկելի փաստերին, առանձին գրողներ, դժբախտաբար, տեսնում են միմիայն մթին երևույթները և աշխատում են ամեն ինչ նկարագրել գորշ ու մթին գույներով։ Նման գործիչները հայտարարում են, թե իրենք, իբր թե, չեն ցանկանում «գունազարդված» և անճիշտ նկարներ կերտել։ Ճիշտ չեն ասում այդ գործիչները։ Ամենից կտրուկ կերպով իրականության «գունազարդումը» քննադատել է մեր պարտիական հասարակականությունը։ Սակայն քննադատելով միակողմանի մոտեցումը, պարտիան միաժամանակ առաջարկել է արձանագրել իրական փաստերը, ցույց տալ հերոսականը, կերտել թե տոկուն հերոսների, թե հաճախ մոռացության մատնվող շարքային գործիչների հերոսությունը։

Գրականության և արվեստի ներկայացուցիչները սովետական ժողովրդի բարեկամների դիրքերից պետք է մոտենան անգամ անհրապույր երևույթների նկարագրությանը ու միշտ պարտավոր են բացահայտել առաջին հերթին հիրավի բարձր ու լուսավոր էջերը՝ մեծ վերելքի ցուցանիշները, այն ամենը, ինչ տեսնում, նկատում և հիացումով արձանագրում են նույնիսկ կապիտալիստական երկրներից ժամանած բազմաթիվ հյուրերը։ Ելնելով նման փաստերից, Ն. Ս. Խրուշչովը իրավամբ դատափետում է նրանց, ովքեր վատաբանում են այն ամենը, ինչ որ գրվել է անհատի պաշտամունքի տիրակալության օրերին։ Նա հիշեցնում է, որ անգամ այդ օրերին եղել են առաջավոր գործիչներ, որոնք ջանացել են ստեղծագործական իրենց զենքերը «ի սպաս դնել մեր ժողովրդին» և ճշգրիտ գույներով նկարագրել իրականությունը։

Դառնալով Էրենբուրգի հանրահայտ մեմուարներին, Ն. Ս. Խրուշչովը նշում է ակնորոշ մի փաստ։ Դա այն է, որ Էրենբուրգը հիրավի «ամեն ինչ պատկերում է մռայլ գույներով»։ Խոսքն անվանի գրողի վաստակի կամ տաղանդի մասին չէ, այլ այն մասին, որ մեմուարներում նա հնարավոր է համարել ծաղրանալ սոսկ մռայլ երևույթների վրա և նկարագրված մարդկանց մռայլ գծերի վրա։ Խոսքը մանավանդ Էրենբուրգի անճիշտ և ուրույն մտահայեցության և «իմաստասիրության» մասին է, որ առաջադրվում է ռևոլյուցիոն օրինականության խախտումների դատափետմանը նվիրված դիտողությունների միջոցով։ Նրանք, ովքեր կենտրոնացնելով հիմնական իրենց ուշադրությունը բացառապես արստրակցիոնիզմի առիթով ստեղծված բանավեճի ուղղությամբ, լռության են մատնում իսկական ճշմարտությունը, իրենք էլ գիտեն, որ լավ չեն վարվում և որ ըստ էության ձայնակցելով Էրենբուրգի սխալ դիտողություններին, աղճատված կերպով են արձանագրում իրական փաստերը։ Գիտենալով

հանդերձ, որ կատարվում են ապօրինի դեպքեր և, որ ձևնարկվում են ձերբակալություններ, պարտիայի ղեկավար կադրերն, այնուամենայնիվ, հավատում էին Ստալինին և չգիտեին թե անհանդուրժելի հալածանքներն ու ռեպրեսիաները կիրառվում են ազնիվ ու արդար մարդկանց նկատմամբ։ Շեշտելով այդ փաստը, Ն. Ս. Խրուշչովը, միաժամանակ հիշեցնում է, որ չնայած իրենց պարտությանը դասակարգային թշնամիները չէին հրաժարվել «սովետական կարգերին վնասելու իրենց նենգ դիտավորություններից», և փոխելով պայքարի ձևերը սկսել էին մշակել ու կիրառել պայքարի ավելի խորամանկ ու զգրելի ձևեր սաբոտաժը, վնասարարությունը, գաղտնի սպանությունները, տեռորիստական ակտերը, խռովությունները։ Ռևոլյուցիոն պայքարը, նման թշնամիների դեմ, և՛ անհրաժեշտ էր և՛ անխուսափելի։ Ահա ինչու Լենինի առաջարկով ժամանակին ստեղծվել է ռևոլյուցիայի բոլոր թշնամիների դեմ պայքարող Համառուսաստանյան Արտակարգ Հանձնաժողովը, որի նախաձեռնությամբ դատափետվել են զանազան դավաճանները։ Ն. Ս. Խրուշչովը կանգ է առնում հակալենինյան հոսանքների թշնամական գործողությունների դեմ կազմակերպված պայքարի վրա, տրոցկիստների, զինովևականների, աջ օպորտունիստների, բուրժուական նացիոնալիստների բացահայտ ու քողարկված ընդվզումների վրա։ Նա հիշեցնում է, որ Լենինի մահից հետո, սկզբնական շրջանում Ստալինը պաշտպանում էր լենինյան դիրքերը և որ հենց այդ պատճառով նրան «հավատում ու պաշտպանում էին»։

Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ արվեստի, գրականության, գիտության ներկայացուցիչների համար շնչտված հանգամանքները պետք է ավելի պարզորոշ լինեն հենց այն պատճառով, որ իրական փաստերի աղավաղումն օգտագործվում է անգամ այսօր, լենինյան պատգամների դեմ նիզակներ շարժող առանձին գործիչների կողմից։

Որոշակի կերպով բացահայտելով տակավին Լենինի կողմից ցուցադրված Ստալինին հատուկ խոշոր թերություններն ու սխալները, նորից ծանրանալով Լենինի դիպուկ դիտողությունների վրա, Ն. Ս. Խրուշչովը հիշեցնում է, որ Լենինը դատափետելով հանդերձ Ստալինին համարում էր մի որոշ շրջանում «մարքսիստ, մեր պարտիայի ականավոր, ռևոլյուցիային նվիրված գործիչ»։

Հետագա տարիներին, սակայն, Ստալինը ինքը չարաշահել է պարտիայի վստահությունը, խախտել է պարտիական կյանքի լենինյան նորմաները, լուրջ վնասներ է պատճառել կոմունիզմի գործին։ Չարաշահելով պարտիայի կողմից իրեն վստահված իշխանությունը ու խախտելով ղեկավարության լենինյան սկզբունքները, Ստալինը, ինչպես նշում է Ն. Ս. Խրուշչովը, տնտեսական ու քաղաքական բնույթի կոպիտ սխալներ է թույլ տվել։ Ներկայումս այդ տնտեսական ու քաղաքական սխալների քննարկման, պարզաբանման ու հաղթահարման ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում գիտական բոլոր վայրերի և մասնավորապես լեզվագիտության գիտական աշխատողների շրջանում։

Հատկանշական է այն, որ երբ ականավոր վիպագիր Շոլոխովը, 1933-ին, դիմում է անմիջապես Ստալինին և հիշատակելով իրեն ուղղված գրությունները, բողոքի իր ձայնն է բարձրացնում տիրող կամայականությունների դեմ, ստանում է շատ կոպիտ պատասխան։ Շոլոխովը զայրույթով հիշեցնում էր տասնյակ հազարավոր կոլտնտեսականների նկատմամբ կիրառվող ապօրինի դեպքերի մասին, իսկ Ստալինը մեծամտորեն գրում է մեծատաղանդ ռեալիստ գրողին՝ «...Լույսի պես պարզ է, որ հարգելի հողագործներն այնքան էլ ան-

վնաս մարդիկ չեն, ինչպես դա կարող է թվալ հեռվից»։ Ն. Ս. Խրուշչովի ճառում հիշատակված փաստերը նորից բացահայտում են անցյալի արտառոց ու մթին շատ կարևոր էջեր։

Միանգամայն ճիշտ է այն, որ հիշատակված արտառոց դեպքերը պետք է լավ հիշի յուրաքանչյուր աշխատավոր։ Իրական փաստերի նշգրիտ հաշվառումը պետք է միշտ ղեկավար ելակետ դառնա գրականության և արվեստի ներկայացուցիչների համար։ «Ամեն մեկը, ով ստեղծագործություններ է գրում սովետական հասարակության կյանքի, նրա ներկայի և անցյալի մասին», պարտավոր է մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրել պատմական ռեալական դեպքերը։ Դժվարություններ շատ են եղել անցյալում։ Սոցիալիզմի հաղթանակի համար մղված պայքարի օրերին կոփվել են նորանոր մարտիկների ամրակուռ շարքերը, կազմավորվել են լենինյան բարձր գաղափարայնության պատգամներին կապված խիզախ և տոկուն գործիչները, ամուր և կորովի այն պարտիական և անպարտիական բոլշևիկները, որոնց առույգ ու լուսավոր կերպարները նկարագրվել են առաջավոր սովետական գրողների ստեղծագործությունների մեջ։ Ահա ինչու մենք միանգամայն հիմնավորված ենք համարում Ն. Ս. Խրուշչովի գարմանքը ընդդեմ արվեստի և գրականության այն վավերագրերի, ուր ակներևորեն աղավաղված գույներով են նկարագրված կյանքն ու իրականությունը և մանավանդ պայքարի ու հաղթանակների համար մարտնչող գործիչների կյանքն ու ապրումները։ Միանգամայն տեղին է և անհրաժեշտ մանավանդ սովետական երիտասարդներին ուղղված կոչը՝ ուսումնասիրել ռևոլյուցիայի պատմությունը, պահպանել ռևոլյուցիոն հայրերի ու մայրերի հիշատակը, դառնալ ռևոլյուցիոն-մարտական սերնդի գործի արժանավոր շարունակողներ։

«...Մեր սովետական մարդիկ,—ասում է Ն. Ս. Խրուշչովը հերոսական մարտերի էպոխայի մասին,—այն ժամանակ թշնամիներին հաղթում էին՝ լինելով վատ հագնված և կիսաքաղց վիճակում, երբեմն չունենալով նույնիսկ հոտած ձուկ, բայց նրանք չէին նվվում և չէին տնքում, այլ տոկուն կերպով կրվում էին, անձնվիրաբար պաշտպանում ռևոլյուցիայի նվաճումները։ Մեր պարտիան միշտ կանգնած է եղել գրականության պարտիականության դիրքերում...»։ Ապա կոչ անելով համախմբվել լենինյան գրոշի ներքո, ամրացնել ծեր և երիտասարդ, պարտիական և անպարտիական գործիչների ամուր միասնական մարտական ընտանիքի միությունը, Ն. Ս. Խրուշչովը իրավամբ ընդգծում է մարքսիզմ-լենինիզմի հաղթական գաղափարների ղեկավար նշանակությունը։ Առանձին ուշադրություն նվիրելով «անպարտիականության» քողի ներքո հանդես եկող գործիչների դիտողություններին, Ն. Ս. Խրուշչովը ընդգծում է, որ իրականում իսկական սովետական աշխատավորները չեն կտրել իրենց պարտիայի շարքերից։ Այդպես են վարվել միայն նրանք, ովքեր ջանացել են քողարկել իրենց անհամաձայնությունը պարտիայի գաղափարների և հայացքների հետ։ Չի կարելի պատահական համարել այն, որ հառում առանձնապես հիշատակվում են որոշակի կերպով Ֆուրմանովի «Չապաև» վիպակը, Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղ» վեպը, Ֆադեևի և Օստրովսկու մեծատաղանդ գեղարվեստական ստեղծագործությունները, ռևոլյուցիոն սովետական վիպագիրների այն գործերը, որոնք ցայտուն կերպով նկարագրել են մեծ ռևոլյուցիոն էպոխայի հերոսական էջերը, ժողովրդի շարքերի պայքարը, լայնագույն գանգվածների ամենասերտ կապը մեր պարտիայի հետ։ Լավ հայտնի է, որ

այդ վեպերում նույնիսկ անմիջականորեն պարտիայի հետ չկապված անպարտիական ռևոլյուցիոն մարտիկները համարում էին իրենց բոլշևիկյան-լենինյան պարտիայի պատգամների հաղթանակի համար մարտնչող անպարտիական բոլշևիկներ։ Դրանք չէին ընդգծում իրենց անպարտիականությունը, չէին կտրվում պարտիայից, չէին ազդարարում իրենց անպարտիականությունը։ Ահա ինչու Ն. Ս. Խրուշչովը նշում է. «Եթե խիստ արտահայտվենք, հասարակության մեջ իսկն ասած, անպարտիականություն չկա»։ Միաժամանակ մենք չենք կարող անուշադրության մատնել առանձնապես կոլտնտեսականների նկատմամբ բարահայտված ջերմագին մոտեցումը և միաձույլ սովետական ընտանիքի բոլոր անդամների՝ ծեր և երիտասարդ, պարտիական և անպարտիական գործիչների միասնականության դրվատումը։ Խոսքն, իհարկե, ռևոլյուցիոն պատգամների դրոշի ներքո ամրացված միասնական սովետական ընտանիքի մասին է, սովետական իշխանության հաղթանակի ու վերելքի համար մարտնչող մեծ ընտանիքի մասին, որի համար անհանգուրժելի և օտարոտի են հին սեփականատիրական աշխարհի մունետիկների պատգամները բուրժուական արվեստի, գրականության, մշակույթի հակաժողովրդական ստեղծագործությունները։

Բացահայտելով և ընդգծելով առանձնապես կոմունիստական գաղափարայնության նշանակությունը, Ն. Ս. Խրուշչովը հիշեցնում է, որ այսօր ամենուրեք երկրագնդի բոլոր երկրներում իմպերիալիզմի գիշատիչ ներկայացուցիչների համար գլխավոր ու հիմնական թշնամին կոմունիզմն է և կոմունիստական գաղափարախոսությունը։ Առաջին ու վճռական պայքարը ուղղելով կոմունիստների դեմ, արևմտյան իմպերիալիստական պետությունների գաղափարախոսները գիտեն, որ միայն կոմունիստներն են հետևողական պայքար մղում ժողովրդի ազատության, աշխատավորների ազատագրման, բարի ուժերի հաղթանակի, խաղաղության և բոլոր ժողովուրդների եղբայրության համար։ Իմպերիալիստները տոգորված են այն համոզումով, որ վճռական հարված ուղղելով կոմունիստների դեմ, կկարողանան խախտել նաև բոլոր այն գործիչների և խաղաղության անկեղծ բարեկամների շարքերը, որոնք ավելի ու ավելի մոտենում են կոմունիստներին և ձայնակցում Սովետական Միության ու դեմոկրատական երկրների խաղաղասիրական ուղեգծին։ Չի կարելի պատահական համարել, որ իմպերիալիստական պետությունների գաղափարախոսներն այսօր մոլեգնորեն նետվում են ոչ միայն կոմունիստների, այլ նաև կոմունիստներին ակտիվորեն ձայնակցող գործիչների դեմ։ Իմպերիալիզմի մունետիկներիս սարսափեցնում է ոչ միայն Սովետական Միության և դեմոկրատական խաղաղասեր երկրների տնտեսական և կուլտուրական վերելքը, այլ նաև այդ մեծ վերելքի ազդեցության ներքո աբքնացող նորանոր երկրների ազատասեր ժողովուրդների ակտիվությունը, բոլոր գաղութային և կիսագաղութային երկրների ժողովուրդների նոր վարքագիծը։ Իմպերիալիզմի «գիտունները» լավ են տեսնում, որ գրականության և արվեստի, գիտության և համայն մշակույթի ներկայացուցիչների շարքերում սկսված գաղափարական նոր պրոցեսները արտացոլում են նշանակալից ձևով արթնացող և իշխողների վաղեմի ռեակցիոն մշակույթի պատգամներից հրաժարվող առաջավոր գործիչները։ Ջյուլիետ Ջոնսոնի, Լակսնեսի, Հեմինգուեյի, Մարգարիտա Պրիչարդի և նման ուրիշ գեղագետների գաղափարական նոր որոնումների և ակնառու ելույթների մեջ այնքան որոշակի ձևով հնչում են իմպերիալիզմի պատգամախոսների ու դիվանագետների մահաբեր ուղեգծի դեմ ծառացող խաղաղասեր ժողովուրդ-

ների նոր մտորումները և ձգտումները, որ թելադրում են անգամ կապիտալիզմի բաղմահմուտ ջահակիրներին հաշվի առնել գալիք պատերազմների ու կոտորածների դեմ մարտնչող գործիչների ազդեցությունն ու նշանակությունը։ Ահա հենց դրա համար էլ մոլեգնորեն նետվելով կոմունիզմի և կոմունիստների դեմ, աղավաղված ձևով նկարագծելով կոմունիստներին, հետամնաց շարքերի կուրացած մարդկանց լարելով ընդդեմ բոլոր դեմոկրատական երկրների ներկայացուցիչների, վայրագ միջոցառումներ մշակելով ընդդեմ կոմունիստների՝ իմպերիալիզմի գաղափարախոսները ձգտում են ոչ միայն ջախջախել «ատելի» կոմունիստներին, այլ նաև սարսափեցնել անմիջականորեն կոմունիստների կազմակերպված շարքերից հեռու, բայց միևնույն կոմունիստներին ձայնակցող և առանձին դեպքերում նույնիսկ նպաստող ազատասեր և խաղաղասեր հոսանքների ներկայացուցիչներին։

Մոլեգին պայքարի հիմնական կրակը ուղղելով ամենից առաջ կոմունիզմի և հաճախ նույնիսկ բացառապես կոմունիստների դեմ, իմպերիալիստական երկրների ռեակցիոն ուժերի սարսափահար պատգամախոսները հուսահատ ճիգեր են անում՝ ջանալով ծուռ ընթացք հաղորդել պատմության բնաանհրաժեշտ զարգացմանը, արվեստական կերպով խափանարար պատնեշներ կառուցել և խոչընդոտել տակավին երեկ նիրհող ու լուռ ժողովուրդների արթնացման պրոցեսին։

Սև այդ պատգամախոսները լավ են գիտակցում ու նշմարում, որ առաջավոր հումանիստական մշակույթի հետ կապված բանաստեղծների ու բոլոր գրողների, նկարիչների ու խոհուն երաժիշտների քննադատական ուրույն ելույթներին ձայնակցում են մերթ ընդ մերթ նույնիսկ իշխող խավերի շարքերից ելած բուրժուական մտավորականության առանձին, ավելի խիզախ և խոհուն ներկայացուցիչները։ Ահա նման գործիչների դեմ իմպերիալիզմի գաղափարախոսները կովի են ելնում ու մոլեգին պայքարի նորանոր մեթոդներ մշակում՝ գիտակցելով, որ նույնիսկ վարանող և նոր ուղիներ որոնող գործիչների խաղաղասիրական ելույթները նշմարելի հարվածներ են հասցնում նեխված իմպերիալիստական աշխարհի ռեակցիոն մշակույթին և նպաստում ժողովրդական շարժումներիս։

Իր նշանակալից ճառում Ն. Ս. Խրուշչովը հիշատակում է, որ բուրժուական-կապիտալիստական երկրների ռեակցիոն գաղափարախոսներն ամեն կերպ աշխատում են քողարկել իրենց իսկական էությունն ու նպատակները և հիմարացնել ժողովրդի միամիտ ներկայացուցիչներին։ Մեր պարտիայի լենինյան Կենտկոմի և սովետական կառավարության ղեկավարը կանգ է առնում անչափ ուշագրավ և հայտնի դեպքերի վրա։ Նրանք, ովքեր հետևել են ռևոլյուցիոն շարժումների պատմությանը և ուսումնասիրել են իշխող դասակարգերի հետ կապված զանազան հոսանքների խորամանկ պրիոմները, գիտեն, իհարկե, որ ռեակցիոն հոսանքները շատ հաճախ ձգտել են սքողել իրենց իսկական դեմքը։

Ջանալով խաբել աշխատավորներին և հանդես գալ, իբր թե, ժողովուրդների բարեկամների դերում, տարբեր ժամանակ տարբեր բուրժուական համհարզներ նետել են «Սովետները առանց կոմունիստների» դեվիզը և այդ ձևով հարթել են ուղիներ կոնտրռևոլյուցիոն ուժերի համար։

Գուցե անտեղի չէր լինի նշել, որ սովետական գրականության հայտնի ներկայացուցիչների գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ժամա-

նակին բավական ուշագրավ ձևով նկարագրվել են նման գործիչների դեմքերը։ Քաղաքացիական պատերազմի մեծ ռևոլյուցիոն էպոպեայի պատմության հարուստ աննալներում կարելի է գտնել պատկերավոր էջեր։ Ուշագրավ կարելի է համարել նաև արաբական երկրներում կատարվող վերջին դեպքերը։ Այդտեղ իմպերիալիստական պետությունների սպասավորների թելադրանքով ռեակցիայի ներկայացուցիչները ջանացել են քողարկել վաղօրոք մշակված իրենց գազրելի ծրագիրները, հանդես գալ իբր թե հայրենասերների դերում։ Շատ շուտ միևնույն այդ գործիչները բացահայտում են իրենց իսկական պլանները, նետվում կոմունիստների և խաղաղության կողմնակիցների դեմ, կազմակերպում ամենավայրագ ռեպրեսիաներ... Իմպերիալիզմի անգամ մեծ փորձառություն ունեցող սև գաղափարախոսներին լավ է հայտնի, որ այսօր շատ դժվար է բացահայտորեն հանդես գալ ընդդեմ ժողովրդի, դեմոկրատիայի, սոցիալիզմի և որ միմիայն դիմակավորված կեղծ հայրենասիրության պատգամներով նրանք կարող են մթագնել արթնացող ժողովուրդների ինքնագիտակցությունը...։

3.

Մերկացնելով ամենակտրուկ կերպով առաձգական վարագույրով շղարշված գաղափարական-հասարակական երևույթների սոցիալական աստառը և ցուցահանելով հասարակական առանձին հոսանքների դասակարգային էությունը, Ն. Ս. Խրուշչովը կոչ է անում միշտ հաշվի առնել կարևորագույն մի ելակետի մեծագույն նշանակությունը։ Նա ընդգծում է, որ արվեստի և գրականության ամենահիմնական սկզբունքը բոլոր գեղագետների համար պիտի լինի պարտիականությունն ու ժողովրդայնությունը։ «Պարտիան,—ասում է նա,—պաշտպանում է իսկական, ճշմարտացի, գեղարվեստական ստեղծագործությունները՝ կյանքի ինչպիսի բացասական կողմերի էլ վերաբերեն, եթե դրանք օգնում են ժողովրդին նոր հասարակարգի համար մղվող պայքարում, համախմբում և ամրացնում են նրա ուժերը...»։ Առաջադրելով կարևոր այդ հիմնակետը, Ն. Ս. Խրուշչովը հիշեցնում է, որ գաղափարախոսության ասպարեզում խաղաղ գոյակցություն չի կարող լինել ու չպիտի լինի... Լավ է հայտնի այն, որ իրականում այդ սկզբունքը միշտ զենքավոր դրույթ է եղել լենինյան դրոշի ներքո աշխատող բոլոր կոմունիստների համար։ Եթե մենք ուշադրությամբ նորից և նորից թերթենք Վ. Ի. Լենինի երկերի շատ և շատ էջերը, լենինյան նշանակալից նկատողությունները «Լենինյան ժողովածուների» մեջ, ապա նաև պարտիական բազմաթիվ համագումարների ու խորհրդաժողովների ատենագրությունների մեջ զետեղված նյութերը, շատ պարզ կտեսնենք, թե որքան մեծ նշանակություն է տրվել անգամ անցյալում գաղափարախոսական պրոբլեմներին։ Պարբերաբար առաջադրվող ու քննարկվող իդեոլոգիական հարցերը, գաղափարական տարաձայնություններն ու ներհակ կարծիքները նպատակ են ունեցել ավելի հստակ կերպով ճշտել ռևոլյուցիոն մարքսիստների դիրքորոշման հիմնական հատկանիշները։ Սուր վեճերն ու պայքարը մղվել են հենց նրա համար, որ գաղափարախոսության բնավայրում խաղաղ գոյակցությունը համարվում էր անհանդուրժելի։ Բավական է միայն ուշադրությամբ թերթել Վ. Ի. Լենինի հայտնի աշխատությունների կարևորագույն էջերը, որպեսզի ակնորոշ դառնա Ն. Ս. Խրուշչովի ճառում քննարկվող փաստերի և իմաստալից դիտողությունների թեորիական նշանակությունը։

Կանգ առնելով օրինակ՝ Մ. Շոլոխովի կյանքի և գործունեության հիմնական փուլերի վրա, նկարագրելով «Խաղաղ Դոն» և «Հերկած խոպան» ռեալիստական վեպերի մեծատաղանդ հեղինակի մտահայեցության գլխավոր հատկանիշները, Ն. Ս. Խրուշչովը ասում է, որ Մ. Շոլոխովը «ունի հասարակական երևույթների և իրադարձությունների էությունը խոր կերպով ըմբռնելու, բարեկամներին լավ տեսնելու, թշնամիներին ճանաչելու և տաղանդավոր կերպով պարտիական դիրքերից իրական կյանքի պատկերներն արտահայտելու հսկայական ձիրք...»։

Շատ դիպուկ և շատ ճիշտ խոսքեր են։ Այդ տողերը հիրավի լավ են բնութագրում ոչ միայն ականավոր սովետական վիպագրի բարձր արվեստի գլխավոր հատկանիշները, այլ նաև նրա ռևոլյուցիոն-հումանիստական մտահայեցությունը։ Դիպուկ այդ բնութագրումը, ինչպես ինձ է թվում, կարող է մեզ տալ նաև սովետական գրականության ուրիշ առաջավոր ներկայացուցիչների ստեղծագործությունների քննարկմանն և ճշմարիտ ուսումնասիրությանն օժանդակող անհրաժեշտ զենքեր։

Լավ է հայտնի, համենայն դեպս այն, որ առաջավոր սովետական գրողները աչքի ընկնող և նշանակալից դեր են կատարել համաշխարհային գրականության մեջ ամենից առաջ, որպես սոցիալիստական ռեալիզմի ներկայացուցիչներ։ Այդ մասին կարելի է գտնել բազմաթիվ փաստական տեղեկություններ բազմազան մատենագիտական ակնարկների և առանձնապես «Արտասահմանյան գրականություն» հանդեսի բիբլիոգրաֆիական բաժնում զետեղված նյութերում։ Սովետական գրողները բարձր են գնահատվել, որպես ռեալիստ և ռևոլյուցիոն գեղագետներ և միշտ խոհուն հումանիստ-մտածողներ։ Մեր առաջավոր գրողների արտասովոր ժողովրդականությանը զանազան երկրներում և առանձնապես դեմոկրատական երկրներում նկատելի չափով նպաստել է շատ կարևոր մի հանգամանք։ Բարձր է գնահատվել սովետական բանաստեղծների և արձակագիրների ամբակուռ մարտական հայեցությունը։ Տաղտուկ և հուսահատական երգերից հոգնած ընթերցողներին սովետական գրողները ցույց են տվել լուսավետ հեռանկարներ, կյանքի մոայլագույն երևույթները ճշգրիտ կերպով մեկնաբանող մարտնչող գործիչներին հատուկ մոտեցումը։ Նույնիսկ իրականության ներհակությունները և տխուր երևույթները նկարագրող մեր գրողները ցույց են տվել ընթերցողներին նոր ուղիներ և նկարագծել են դեպի լուսավոր ապագան թռչող ամուր և տոկուն կառուցողների ուժն ու հմայքը։ Չի կարելի պատահական համարել այն, որ Մաքսիմ Գորկու և ուրիշ հայտնի գրողների ազդեցության ներքո մի շարք ականավոր արևմտյան գրողներ անհրաժեշտ են համարել ուղևորվել Մոսկվա և ուսումնասիրել սովետական այնքան «զարմանալի» իրականության նոր երևույթները։ Հերբերտ Ուելսի կամ Բերնար Շոուի նման արևմտյան գրողները վարանելով մոտենալով մեր մեծ հայրենիքի սահմաններում տեղի ունեցող դեպքերին, չէին ցանկացել թողարկել իրենց հույզերն ու տրամադրությունները։ Նրանք հանդես են եկել, չնայած նույնիսկ քննադատական վերապահումների, հիմնականում խաղաղության բարեկամների դերում։ Այդ մասին ուշագրավ տվյալներ են հրապարակվել թե՛ «Պատմական արխիվ» ամսագրի և թե սովետական դիվանագետներից մեկի՝ Մայսկու մեմուարների մեջ։

Կարելի կլիներ հիշատակել ականավոր գիտնականներին, խաղաղության ուրիշ բարեկամներին, արվեստագետներին և շատ ուրիշ գործիչներին։ Արև-

մրտյան և արևելյան զանազան երկրներում տարբեր ժամանակ հանդես են եկել մշակույթի առաջավոր ներկայացուցիչներ, որոնք նկատելի դեր են կատարել, որպես իմպերիալիստների մահաբեր ուղեղծի բացահայտ քննադատներ և ժողովուրդների բարեկամության ու խաղաղության համոզված քարոզիչներ։ Եղել են, իհարկե, դեպքեր, երբ առանձին գրողների կամ դեղագետների ուրույն հակասական մտորումները կամ քայլերը ենթարկվել են քննադատության։ Բավական է միայն հիշել Անատոլ Ֆրանսի, Ռոմեն Ռոլանի, Հեմինգուեյի մեծատաղանդ ուրիշ գրողների մասին հրապարակված բազմազան ակնարկները։ Չնայած այդ ամենին միշտ ակներև է եղել ուշադիր սովետական լսարանի համար, որ կարևորագույն և հիմնական դոմինանտը նման արևմտյան գործիչների գրական ստեղծագործությունների մեջ եղել է իմպերիալիզմի բոլոր սև ուժերի և պատերազմների հրձիգների դատափետումը, ինչպես նաև միաժամանակ խաղաղասիրական պատգամների ակտիվ պրոպագանդը։

Գուցե սխալ չէր լինի այդ պատճառով ասել, որ հիշատակված առաջավոր գրողներիս նրանց շատ ուրույն մտահայեցության պրոգրեսիվ հատկանիշներն էլ հետագա շրջանում ազատագրել են վաղեմի օրերի միամիտ ու սխալ անուրջների ազդեցությունից ու թելադրել են ավելի որոշակիորեն մոտենալ կոմունիզմի գրոշի ներքո մարտնչող ռևոլյուցիոն հումանիզմի հետևողական ջահակիրներին՝ կոմունիստներին։ Անհրաժեշտ է սակայն նշել, որ այդ ուրույն պրոցեսը նկատի են առել և նկատի են առնում, ըստ երևույթին, նաև իմպերիալիստական աշխարհի տրադիցիոն գաղափարախոսները։ Դրանք մոլեգնորեն նետվելով կոմունիստների դեմ՝ միաժամանակ հալածում և խոշտանգում են կոմունիստների ակտիվ աջակիցներին, հին աշխարհի դեմ ծառացող առաջավոր գործիչներիս, հումանիստական նոր մշակույթի ջահակիրներին։ Այդ ամենը ակներև է ավելի, քան երբևիցե։ Գաղտնիք չէ այն, որ կոմունիզմի և կոմունիստների դեմ ուղղված վայրագ ռեպրեսիաները այսօր դատապարտվում են դեմոկրատական լայնագույն շարքերում նույնիսկ կապիտալիստական երկրներում։ Այդ շարքերին հայտնի է, որ կոմունիստների դեմ ծառացող սև ուժերը վաղը կնետվեն դեմոկրատիայի և հումանիզմի բոլոր գաղափարախոսների դեմ։ Պատմության դասերն ուսումնասիրել են այժմ նույնիսկ նրանք, ովքեր չեն վստահանում բացահայտորեն հանդես գալ ռևոլյուցիոն ուժերի ակտիվ պաշտպանների դերում։

Այնուամենայնիվ արդեն մոտակա անցյալում կատարված դեպքերը, իմպերիալիստների գաղութարարությունն ու բռնությունները, այսօր էլ կրկնվող անհանդուրժելի ձեռնարկները ցույց են տալիս, որ երբեք չի կարելի թերագնահատել իդեոլոգիական պայքարի մեծ նշանակությունը։ Անհրաժեշտ է կտրուկ կերպով ընդգծել, որ գաղափարախոսության ասպարեզում խաղաղ գոյակցություն պաշտպանող արվեստագետները իրականում նպաստում են հետամնաց ուժերի գործունեությանը, դանդաղեցնում են առանձին, տակավին միամիտ անուրջներով տարված գեղագետների հոգևոր ազատագրումը բուրժուական մտահայեցության կապանքներից և մանավանդ նկատելի հարված են հասցրնում ճնշված ժողովուրդների ազատագրման համար մարտնչող եղբայրական-միասնական շարքերի ամրությանը։ Չի կարելի սոցիալական-հասարակական սուր բախումների օրերին հանդես գալ «չեզոքների» դերում։ Նրանք, ովքեր այդպես են վարվում, իրականում օգնում են բռնակալ ուժերին, չար մարդ-

կանց, պատերազմների ու կոտորածների սև մունետիկներին։ ...«Ով չի գնում բանվորների և գյուղացիների հետ, նկատում է Ն. Ս. Խրուշչովը, անխուսափելիորեն գնում է նրանց դեմ...»։

Երկու ուժեր կանգնած են այսօր միմյանց դեմ։ Այդ ներհակ ուժերից իմպերիալիստական երկրները պաշտպանում են գաղութարարությունը, պատերազմներն ու կոտորածների ուղին, բռնությունների ու շահագործումների վրա խարսխված անիրավ կարգերը։ Սև այդ աշխարհի դեմ կանգնած է ժողովուրդների ազատագրման և բարեկամության համար մարտնչող մեծ այն միությունը, որ պաշտպանում է խաղաղության դատը, հանդես է գալիս կոմունիստական նոր կարգերի պաշտպանի դերում։ «Աշխարհում,—ասում է Ն. Ս. Խրուշչովը,—տեղի է ունենում երկու անհաշտ գաղափարախոսությունների՝ սոցիալիստական և բուրժուական գաղափարախոսությունների սուր պայքար»։ Սովետական նոր սոցիալիստական մշակույթի ներկայացուցիչների պարտքը պիտի լինի ծառանալ ոչ միայն բուրժուական մշակույթի ակնհայտնի դեգրադացիան բացահայտող աբստրակցիոնիզմի, այլ նաև բուրժուական գաղափարախոսության պատգամների վրա խարսխված բոլոր հոսանքների դեմ։

Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ Ն. Ս. Խրուշչովի կողմից առաջադրվող դրույթները ուսանելի են ոչ միայն արվեստի և գրականության ներկայացուցիչների համար։ Առաջադրությունների մեջ կան դրույթներ, որոնք, ինչպես մեզ է թվում, պետք է ուշադրությամբ նկատի առնեն նաև սովետական մշակույթի պրոբլեմներն ուսումնասիրող ոչ միայն արվեստագետներն ու գրականագետները, բանասերները, այլև պատմաբանները։ Շեշտված դրույթները անշուշտ կքննարկվեն՝ կապակցված մեր օրերի սովետական կենդանի առօրյայի և մշակույթի ուշադիր գիտական ուսումնասիրության հետ։ Դա նշանակում է, որ թե՛ արվեստի և գրականության և թե՛ հումանիտար գիտությունների ներկայացուցիչները պետք է հաշվի առնեն կարևորագույն մի հանգամանք։ Որքան էլ ակնառու աշխատանք են կատարել արվեստի և գրականության առաջավոր աշխատավորները. չի կարելի ժխտել, որ այդ աշխատավորները անգամ այսօր չեն տալիս լիովին այն, ինչ որ կարող են տալ ու պետք է տան մեծ սովետական ժողովրդին։ Խոսքը ժողովրդի շարքերն ամրացնող, ժողովրդին եռանդ և էնտուզիազմ ներշնչող, աշխատավոր զանգվածների կորովը ուժեղացնող, ժողովրդի շարքերից ելած ակտիվ կառուցողներին նկարագծող արվեստի ու գրականության բարձր ու կենդանի վավերագրերի մասին է։

Այս ակնարկը սոսկ հանրահայտ փաստերի մի արձանագրություն է իհարկե։ Սակայն այն չի կարող լիակատար համարվել առանց նոր այն դեպքերի արձանագրության, որ հրապարակվել է հենց այս օրերին մեր մամուլի էջերում։

Ես կանգ կառնեմ երկու կարևոր նոր փաստերի վրա։

Մարտի 26-ին մեր ՏԱՍՍ-ի հատուկ հաղորդագրության մեջ նշվել է, որ մարտի 17-ից մինչև 25-ը ընկած ժամանակաշրջանում «Մարս—1» միջմոլորակային կայանի հետ անց է կացվել ռադիոկապի հերթական սեանս և որ այդ սեանսի ժամանակ մինչև կայանը ձգվող հեռավորությունը կազմում էր 106.276 հազար կիլոմետր։ Իմաստ ունի արդյո՞ք կցել հիրավի այդ ցնցող տեղեկանքին որևէ կոմենտարներ։ Երբեք ոչ գիտաֆանտաստիկական վեպերի հայտնի հեղինակ Ժյուլ Վեռնը և ոչ էլ նրան հետևող ուրիշ վիպագիրները չէին կարող երևակայել այդպիսի ֆանտաստիկական գիտական հեռանկար։ Սովե

տական գիտությանը տակավին անհայտ, անծանոթ, շատ պարզ ու տոկուն, շատ համեստ մեր գիտնական աշխատավորների ջանքերով կառուցվել է հրաշալի այդ «Մարս—1» միջմոլորակային կայանը, այդ կայանը շարունակում է իր արտասովոր ուղևորությունը։

Երկրորդ տեղեկանքը նույնչափ նշանակալից պետք է համարել։ Միևնույն ամսի 26-ին սիբիրյան մեծ և լեգենդար Ենիսեյ գետի հնազանդեցումը արդեն ավարտվում է, մեծ գետի «հոսանքը փակելու վերջին աշխատանքներն են կատարվում»։ Կառուցվում է աշխարհի ամենախոշոր հիդրոէլեկտրականը։ Մոտ են Սիբիրյան տայգան ու լեռները։ Տայգայում բարձրանում է նոր Դվինոգորսկ քաղաքը։ Ենիսեյի մասին գրել են Չեխովն ու Կորոլենկոն, որ դա մեծ, ամեհի, հզոր գետ է, բայց շրջապատի մարդիկ անզոր, թույլ ու թշվառ են։ Այսօր սովետական նոր մարդիկ հնազանդեցնում են գետը։ Նրանք ապրում են վրաններում, նորակառույց քաղաքում տոկուն աշխատանք են տանում Կրասնոյարսկի հիդրոհանգույցների մոտ, հսկայական ամբարտակ են կառուցում։ Մեծ և ամեհի գետի կործանիչ ուժը դարձել է ստեղծարար։ Այս տեղեկություններն են հաղորդվում Դվինոգորսկուց։

Կրասնոյարսկի հսկայական նոր կայանը 5 միլիոն կիլովատ զորություն ունի։ Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Բոչկինը գրում է, որ այդ կայանը կտա ամենաէժան էներգիա և կենարար ջուր Մինուսինյան արգասավոր հովտին ու Խակասիայի դաշտերին («Պրավդա», 1963 թ., մարտ 24)։ Հերոսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են ավելի քան հազար կոմունիստներ և երեք ու կես հազար կոմերիտականներ... Բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ուղղվում գործարանների և սովխոզների աշխատավորների կողմից։ Դեմոկրատական Գերմանիայի և Լեհաստանի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի և Ռումինիայի, հեռավոր Նեղոսի ափերից Ասուանի մեծ ամբարտակի կառուցողների կողմից ողջույններ են ուղղվում սովետական կառուցողներին։ Պատկերավոր իր նկարագրության մեջ տաղանդավոր վիպագիր Բորիս Պոլևոյը ջերմ տողեր է նվիրում երիտասարդ կառուցողներին։ Ցնցող տպավորություն են թողնում նրա ակնարկի անգամ սեղմ ու հակիրճ տողերը։ Նոր կայանի կառուցման ընթացքում հաշվի են առնվել «գիտության և հիդրավլիկ պրակտիկայի նորագույն նվաճումները, ինժեներական մտքի խիզախությունն ու հիդրոշինարարության ամենահարուստ փորձը...»։ Հերոսական աշխատանքով՝ Սիբիրյան տայգայի «Սովետական երիտասարդ և ուժեղ մարդիկ սովետական բոլոր աշխատավորների հետ միասին ճանապարհ են բացում դեպի կոմունիզմի լուսավետ ապագան»։ Աշխատանքներին անցնելուց առաջ նրանք ընտրել են սիբիրյան ամուր մի դրանիտե ժայռաբեկոր և փորագրել են վրան՝ «Հնազանդվիր Ենիսեյ»... Երբ անակնկալ կերպով վար է նետվում այդ բեկորը, մեծ կայանի աղջիկներից մեկը—Լյուբկա Միտենինան փորագրում է բետոնե մեծ մոնոլիտի վրա—«Այնուամենայնիվ գու կհնազանդվես Ենիսեյ» խոսքերը... Եվ ահա մարտի 26-ին կայանի կառուցողները հաղորդում են Ն. Ս. Խրուշչովին, որ «Ենիսեյի հոսանքը փակվում է»...

...Սիբիրյան տայգաներ, աքսորավայրեր և աքսորականներ, ամեհի գետեր, թշվառ մարդիկ, ցարական ամենավայրագ սատրապների սանձարձակ բռնակալություն... Այդ ամենին վերջ է տրվել համառուսական պրոլետարիատի և բանվոր ժողովրդի ռևոլյուցիոն ավանգարդի՝ Լենինյան պարտիայի ղեկավարությամբ։ Հանդես են եկել նոր մարդիկ, առույգ և տոկուն սովետական ին-

ժեներներ և տեխնիկներ, նոր երիտասարդներ և ստեղծվում են նոր քաղաքներ, նոր գործարաններ, կոմունիզմի մեծ կայաններ...։

Մի՞թե կարելի է հանդուրժել, երբ այդպիսի ցնցող երևույթները անուշադրության են մատնվում արվեստի և գրականության ներկայացուցիչների կողմից, չեն կերտվում ավելի շատ վեպեր և երգեր մեր նոր հերոս երիտասարդների մասին, չեն նվիրվում երաժշտական ստեղծագործություններ, այսօր է, անհայտ գիտական կոլեկտիվին, որի ջանքերով կապ է հաստատվել Մարս նետվող կայանի հետ, նկարներ չեն պատրաստվում այլափոխված սիբիրյան բնանկարի կամ ամեհի Ենիսեյ գետը հնազանդեցնող այդ արտասովոր երիտասարդ կառուցողների մասին։ Մի՞թե կարելի է բնական համարել, որ հասարակական գիտությունների առաջին ներկայացուցիչները նույնպես՝ արվեստի և գրականության վավերագրերի քննարկման ժամանակ, հաշվի չեն առնում, որ բեղուն և կենդանի սովետական նոր առօրյայից և նոր երևույթներից իրավունք չունի կտրվել ոչ արվեստագետը և ոչ էլ գրականագետը։ Մի՞թե կարելի է հասկանալի համարել այն, որ անուշադրության է մատնվում գիտության և տեխնիկայի երիտասարդ ներկայացուցիչների աշխատանքը, այն ինտենսիվ աշխատանքը, որ պետք է թե ավելի ուժգնորեն արտացոլվի մեր գեղագետների ստեղծագործությունների մեջ և թե ավելի բարձր ու նպատակասլաց ուղղություն հաղորդի նաև բանաստեղծների ու պատմաբանների գիտական-ստեղծագործական աշխատանքներին։

Ն. Ս. Խրուշչովը շատ տեղին է հիշեցնում մեզ, որ անհրաժեշտ է լուրջ կերպով խորհել ավելի վճռական շրջադարձի կարևորության մասին գաղափարախոսական ճակատի բնավայրում։